Նախադպրոցական ուսումնական հաստատություն

Մանկավարժական աշխատողների վերապատրաստում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հաստատություն՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Թիվ 82 Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Վերապատրաստվող՝ Անի Աղասարյան

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Համագործակցություն ծնող, երեխա և մանկապարտեզ
3. Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ
4. Ստեղծագործող երեխա
5. Եզրակացություն
6. Գրականության ցանկ

Ներածություն

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Ընտաննիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Արդյունավետ համագործակցությունը ծնողի հետ անհրաժեշտ պայման է նախադպրոցական հաստատության համար:

Ժամանակակից ծնողը կարիք ունի նոր տիպի, նոր թեմայով երկխոսության: Դաստիարակի կողմից այդ բոլոր թեմաների բացահայտումներ ուղի են հարթելու ծնողներին տանելու դեպի այն ծիլը ուր գործում է «ծնողական երջանկության» բանաձևը:

Ծրագրի գլխավոր չափանիշը, ծրագրային նյութի դաստիարակչական արժեքն է, զարգացնող, խոսքային, գեղագիտական, ֆիզիկական միջավայրին ներկայացվող պահանջներ, 3-4 տարեկան երեխաների բնութագրիչներն ու հոգեկան զարգացման առանձնահատկությունները, խմբում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը և ուսուցման ու գործունեության ձևերի կազմակերպումը:

Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի գերակայող դերը երեխայի դաստիարակության և անձնավորության ձևավորման գործում: Ընտանիքը սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առանձին սոցիալական դերերն ու հարաբերությունները:

Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք կոչված են ուղղորդելու տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները:

Համագործակցություն ծնող, երեխա և մանկապարտեզ

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների համակրանքների ու հակակրանքների մասին: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Դիտարկենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ սկզբունքները:

- Երեխայի հանդեպ սիրո և հարգանքի դրսևորում:
- Երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում:
- Երեխային՝ դաստիարակության միասնական պահանջների ներկայացում:
- Հետևողականություն և պահանջկոտություն:
- Երեխային ընտանիքի գործունեության մեջ ակտիվ ներգրավում:

Ներկայացնում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները:

- Շաբաթական կամ ամսական լրատուներ տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Զրույցները հնարավորություն են տալիս դաստիարակին միշտ շփման մեջ լինել ծնողի հետ, շահագրգիռ երկու կողմերին էլ իրազեկ դարձնել երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և ըստ այդմ խորհրդատվությունների միջոցով, տարբեր գործոններով համատեղ ազդել երեխայի վարքի վրա:

Դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Ներկայացնեմ մի քանի դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ:

- Ծնողների պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործեք բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերեք:
- Ժողովները և հանդիպումները կազմակերպեք ծնողների հարմար ժամերի:
- Թույլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:
- Պահպանեք սերտ կապ:
- Հետևեք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ:
- Փորձեք ներգրավել ամբողջ ընտանիքին: Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնեք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

- Հենվեք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքեք դրականորեն:
- Եղեք համբերատար: Պահպանեք գաղտնիությունը:

Ստեղծագործող երեխա

(3-5 տարեկան)

- Հաճախակի զբոսանքի ելեք Ձեր երեխայի հետ և ճանապարհին զրուցեք նկատված ամեն բանի մասին:
- Փորձեք տարբեր կերպարներ և ձևեր որոնել երկնքով սահող ամպերի մեջ:
- Խնդրեք Ձեր երեխային՝ մի երևակայական կենդանի նկարել, որ գոյություն չունի աշխարհում, և բացատրեք, թե ինչպե՞ս է այդ կենդանին ապրում:
- Կազմակերպեք պարզ բառախաղեր. նախ՝ խնդրեք Ձեր երեխային, որ նա թվարկի շրջապատի բոլոր թռչող առարկաներն ու էակներն, հետո՝ այն ամենը, ինչ կարմիր է կամ կանաչ: Մեկ էլ առաջարկեք գտնել այնպիսի առարկաներ, որոնց անվանումները հանգավորվում եմ որոշակի բառերի հետ:
- Նստեք երեխայի կողքին և խնդրեք նրան ուշադիր լսել շրջապատի ձայները, այնուհետև նկարագրել դրանք:
- Երեխայի աշխատանքը գնահատելիս «Լավ է, գեղեցիկ է» ասելու փոխարեն փորձեք լինել ավելի հստակ և նկարագրել այն, ինչը ձեզ դուր է գալիս նրա կատարած աշխատանքում: Խոսեք օգտագործված նյութերի, գույների, գաղափարի, աշխատանքի առանձնահատկությունների մասին:
- Հնարավորություն տվեք երեխային պատմել իր աշխատանքի մասին և արտահայտել իր զգացմունքները: Քաջալերեք նրան՝ առաջարկելով՝ «Պատմիր ինձ քո նկարի մասին: Ինչու՞ որոշեցիր հենց ձի նկարել»:
- Անպայման ցուցադրեք երեխայի աշխատանքը՝ այն փակցնելով պատին:

Եզրակացություն

Ես շատ եմ կարևորում մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ ընտանիք կապը: Որի արդյունքում մեծանում է՝

- Ծնողների ոգևորվածությունը:
- Համախմբվածությունը:
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ:
- Ծնողների վստահության բարձրացումը մանկապարտեզի և դաստիարակության նկատմամբ:
- Երեխաների լավ վարքը:

Մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվել է մեր համատեղ աշխատանքը, որը երկու կողմերիս էլ հաճելի է:

Գրականության ցանկ

Նախադպրոցական մանկավարժություն

1. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Երևան 2010թ.
2. Լ.Սմբատյան – Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում, Երևան 2014թ.
3. Մանկապարտեզի (3-4 տարեկանների) կրթական համալիր: Երևան 2011թ.